ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CORRUPTION PREVENTION COMMISSION

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

01 հոկտեմբերի 2021թ. N 02-Լ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 03-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)

որոշում է.

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության առանձին ոլորտներում աշխատանքների կատարման գործընթացի համակարգումը կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամներին վերապահելու մասին» N 03-Լ որոշումը (այսուհետ՝ Որոշում) շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Հանձնաժողովի՝ կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության աշխատանքների կատարման գործընթացի համակարգումը վերապահել ***Հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանին***.

2. Հանձնաժողովի՝ հայտարարագրերի վերլուծության վարչության, այդ թվում՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության աշխատանքների կատարման գործընթացի համակարգումը վերապահել ***Հանձնաժողովի անդամ Արամայիս Փաշինյանին***.

3. Հանձնաժողովի՝ վարույթների և իրավական ապահովման, ինչպես նաև մասնագիտական ստորաբաժանումների կողմից իրականացվող առանձին գործառույթների իրականացման ընթացքում Հանձնաժողովի գնահատմամբ իրավական աջակցության անհրաժեշտություն ունեցող աշխատանքների կատարման գործընթացի համակարգումը ***<u>վերապահել Հանձնաժողովի անդամ Նարեկ Համբարձումյանին</u>***.

4. Հանձնաժողովի՝ հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության, ինչպես նաև մեթոդական աջակցության վարչությունների աշխատանքների կատարման գործընթացի համակարգումը ***<u>վերապահել Հանձնաժողովի անդամ Լիլիթ Ալեքսանյանին.</u>***

5. Հանձնաժողովի՝ բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչության աշխատանքների կատարման գործընթացի համակարգումը ***<u>վերապահել Հանձնաժողովի անդամ Մարիամ Գալստյանին</u>***.

6. Հանձնաժողովի գործունեության առանձին ոլորտների աշախատանքների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են Հանձնաժողովի կողմից սահմանած ժամկետներում և ձևաչափով:

7. Հանձնաժողովի նախագահն ապահովում է Հանձնաժողովի ամբողջ գործունեության և աշխատանքների անխափան իրականացումը:»:

2. Հաստատել Հանձնաժողովի անդամների համակարգման ոլորտների աշխատանքների պլանավորման և հաշվետվողականության ապահովման ձևաչափը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Ա. ՓԱՇԻՆՅԱՆ

Ն. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ. ԳԱԼՍՏՅԱՆ